Յասոնը և Ոսկե Գեղմը

Յասոնը և Ոսկե գեղմը

Թարգմանություն՝ 6-2 դասարան

Խմբագրություն՝ Մարինե Ամիրջանյան

Գիրքը պատրաստեց՝ Յուրա Օհանյանը

Նախագծի ղեկավար՝ Ստելլա Երիցյան

<<Մխիթար Սեբաստացի>> Կրթահամալիր Նոր դպրոց

Ե.: Նոր դպրոց, 2014.-32 էջ:

Արկածայի հանրահայտ մեծ պատմությունները լի են կատաղի ճակատամարտերով և անհնարին առաջադրանքներով: Այնտեղ կան նաև սարսափելի հրեշներ և քաջարի հերոսներ: Այս ամենը կա նաև «Յասոնի և Ոսկե գեղմ»-ի պատմության մեջ և դեռ ավելին: Ասում են, որ այս պատմությունը բոլոր ժամանակների ամենահանրահայտ արկածային պատմությունն է:

Պատմությունն սկսվեց, երբ Յասոնը դեռ փոքրիկ տղա էր: Նրա հայրը թագավոր էր, բայց թույլ ղեկավար էր: Նա այնքան թույլ էր, որ նրա զարմիկ Պելիասը հափշտակեց նրա գահը: Պելիասը չար և հզոր մարդ էր: Յասոնի հայրը վախենում էր, որ նոր թագավորը կարող էր վնասել իր որդուն, և Յասոնին ուղարկեց թագավորությունից դուրս՝ ապահով մեծանալու համար:



Թագավորության բնակիչներն այնքան էլ չէին հավանում իրենց նոր ղեկավարին, և Պելիասը դա շատ լավ գիտեր, այդ իսկ պատճառով նա ոչ մեկին չէր վստահում : Թագավորական գուշակը սպասվող վտանգի համար նրան խորհուրդ տվեց չվախենալ սեփական մարդկանցից, փոխարենը թագավորը զգուշացվեց մի անծանոթի մասին, ով կրելու էր միայն մեկ սանդալ: Այս մարդը թագավորի մահվանպատճառն էր լինելու: Պելիասը շատ վախեցավ, երբ լսեց նախազգուշացումը:





Պելիասի՝ գահը վերցնելուց շատ տարիներ անց, մի օր մի անծանոթ եկավ քաղաքի շուկա: Բոլորը զարմացած կանգնած նրան էին նայում: Նա բարձրահասակ, համակրելի, լավ հագնված երիտասարդ էր: Նա հագին միայն մեկ սանդալ կար: Նրա մերկ ոտքը շագանակագույն և փոշոտ էր: Թվում էր, թե նա կորցրել էր իր կոշիկը և այդպես երկար ճանապարհ էր քայլել:



Երբ Պելիասը լսեց անծանոթի մասին, շատ վախեցավ: Նա հիշեց գուշակի՝ երկար տարիներ առաջ ասած բառերը: Նա քշեց կառքը դեպի շուկա: Անծանոթն այնտեղ հանգիստ խոսում էր մարդկանց հետ:

-Ո՞վ ես դու,-հարցրեց թագավորը,-ի՞նչ ես ուզում:

Անծանոթը նայեց Պելիասին և ժպտաց: Բայց ժպիտն ընկերական չէր:

-Ես Յասոնն եմ,- ասաց անծանոթը:- Ես քո զարմիկն եմ: Եվ եկել եմ այստեղ ետ վերցնելու իմ գահը, որը դու գողացել ես իմ հորից: Եթե դու չվերադարձնես այն, ինչ իմն է, ես կվերցնեմ ուժով:

Յասոնի բառերը վախով լցրին թագավորի սիրտը, քանի որ Պելիասը վախկոտ էր: Նա գիտեր, որ չէր հաղթի Յասոնին, սակայն ոչ էլ իր գահից էր ուզում հրաժարվել: Ի՞նչ անել: Նրա գլխում մի միտք ծագեց:



-Դու ցանկանում ես գահը, իմ սիրելի զարմիկ,-ասում է Պելիասը,- բայց նոր թագավորը նախ պետք է իր ժողովրդին ապացուցի իր ով լինելը: Լսե՞լ ես, որ տարիներ առաջ Հերմես աստվածը կախարդական խոյ էր երկիր ուղարկել: Խոյի ոսկե գեղմը այժմ պահվում է Կոլխես թագավորի մոտ: Բայց այն օրենքով պատկանում է Հունաստանին: Եթե դու կարողանաս ետ բերել այն, ապա դրանով դու նաև մեզ վ կբերպատիես: Հետո ես ուրախությամբ քեզ կվերադարձնեմ գահը:



Յասոնը ցնցված էր իրեն սպասող այդ խիզախ ճանապարհորդությունից: Պելիասը շատ ուրախ էր, որովհետև նա գիտեր, որ երիտասարդը ողջ
չի վերադառնա այդպիսի ճանապարհորդությունից:-Ես կգտնեմ ոսկե գեղմը,-ասաց Յասոնն իր հորեղբորը,- ես կվերադառնամ, որպեսզի վերցնեմ իմ գահը: Պելիասը միայն ժպտաց, քանի որ նրա սրտում այլևս վախ չկար:

Առաջին բանը, որ Յասոնն արեց, նավ կառուցող վարպետ Արգոսին վարձելն էր, ով կկառուցեր ամենահզոր նավը, որ երբևէ նավարկել էր ծովում: Նավն անվանվեց «Արգո»: Նրանք, ովքեր լողում էին նավի վրա, կոչվեցին արգոնավորդներ: Ամբողջ երկրից քաջ ռազմիկներ ժամանեցին, որպեսզի օգնեն Յասոնին ոսկե գեղմի որոնման մեջ:

Նավը վերջապես պատրաստ էր, և արկածներով լի ճամփորդությունն սկսվեց: Յասոնը գինի լցրեց օվկիանոսի ալիքների մեջ՝ աստվածներից խնդրելու նրանց օրհնությունը ապահով և հաջող ճանապարհորդության համար: Բոլոր արգոնավորդները գիտեին, որ շատ վտանգներ կային առջևում: Նրանք գիտեին , որ

ոմանք կկորցնեն իրենց կյանքը, բայց գիտեին նաև, որ կգտնեն ոսկե գեղմը և ետ կվերադարձնեն այն: Դրանում նրանք վստահ էին:

Նավարկությունից շատ օրեր անց, արգոնավորդները կանգ առան կղզու մոտ հանգստանալու համար: Նրանք եկան մի ծեր մարդու մոտ, ում անունը Ֆինեուս էր: Նա շատ ծեր էր և թույլ, ավելի շատ մեռած, քան ողջ: Նրանք փորձեցին նրան ուտելիք տալ, բայց Ֆինեուսը հեռու հրեց:

-Ես չեմ կարող ուտել,- ասաց ծերունին,- հզոր աստված Զևսն ինձ պատժել է չափազանց խելացի լինելու համար:
Արգոնավորդները գիտեին, որ Զևսը նախանձ աստված է:

Պատիժն իրոք սարսափելի էր: Ամեն անգամ, երբ Ֆինեուսը փորձում էր ուտել, սարսափելի թևավոր արարածները, որոնք կոչվում էին հարպիներ, հարձակվում էին նրա վրա: Նրանք քերծում և նրա ձեռքից ճանկերով խլում էին ուտելիքը ու թռչում գնում հեռու: Ֆինեուսը չէր կարողանում ուտել ոչինչ: Այժմ նա մահանում էր:



-Մենք կարող ենք ազատել քեզ այդ անեծքից,- ասացին երկու արգոնավորդներ: Նրանք ասացին Ֆինեուսին, որ ուտի ուտելիքը և սպասի: Քիչ անց սարսափելի հարպիները երկնքից սլացան ներքև : Բայց երկու արգոնավորդներն այնպես կատաղի կռվեցին, որ հարպիներն հեռացան և այլևս չվերադարձան:



-Դուք փրկեցիք իմ կյանքը,- բացականչեց Ֆինեուսը:

Նա այնքան երախտապարտ էր, որ արգոնավորդներին պատմեց Բախվող ժայռերի գաղտնիքը: Կոլխեսի մոտ հասնելու համար նրանք պետք է նավարկեին ծովի մեջ գտնվող երկու հսկայական ժայռերի միջով: Այս ժայռերը միմյանց բախվում էին առանց նախազգուշացման: Եթե նավը հայտնվեր նրանց միջև, կջախջախվեր:

- Ձեզ հետ մի աղավնի վերցրեք,- ասաց Ֆինեուսը: - Երբ հասնեք Բախվող ժայռերին, աղավնուն ազատ արձակեք : Եթե ավնաս թռչի ժայռերի միջով, արագ հետևեք նրան, ձեր նավը նույնպես ապահով կանցնի: Բայց եթե աղավնին սատկի, դուք պետք է վերադառնաք: Ձեր նավը կջախջախվի , եթե փորձեք անցնել երկու ժայռերի միջով:

Յասոնը շնորհակալություն հայտնեց ծեր մարդուն, և արգոնավորդները նավարկեցին՝ իրենց հետ վերցնելով նաև մի աղավնի: Շուտով հասան Բախվող ժայռերին: Նրանք ապշած նայում էին, թե ինչպես էին հսկա ժայռերը խլացնող աղմուկով բախվում մեկը մյուսին: Ինչպես կարող էին նրանք նավարկել նրանց միջով: Անշուշտ, կջախջախվեին: Բոլոր արգոնավորդները վախից լռել էին: Յասոնն ազատ արձակեց աղավնուն, ինչպես ասել էր Ֆինեուսը :





Արգանվորդները նայում էին, թե ինչպես է աղավնին դանդաղ թռչում դեպի ժայռերը: Նա մի պահ դանդաղ շրջապտույտ արեց, հետո արագ ու անվնաս սլացավ:

-Շտապե՛ք,- բացականչեց Յասոնը:- Թիավարեք այնպես, ինչպես երբեք չեք թիավարել: Հզոր Արգոն ալիքների միջով կտրուկ անցավ: Հենց որ նրանք հասան Բախվող ժայռերին, հսկայական ժայռերը բացվեցին, և Արգոն նավարկեց նրանց միջով:

Ճամփորդությունը դեպի Կոլխես թեպետ երկար և վտանգավոր էր, բայց Արգոն հասավ նավահանգիստ: Նրանք հասան ոսկե գեղմի երկիր: Կոլխես թագավորն ափ իջավ նրանց ողջունելու: Նրան շատ հետաքրքրեցին այդ օտարերկրացիներն ու նրանց գեղեցիկ նավը:
-Ես Յասոն եմ,-ասաց նրանց առաջնորդը,- ես ոսկե գեղմի ետևից եմ եկել:

Թագավոր ծիծաղեց երիտասարդի համարձակության վրա: Նա մտադրություն չուներ հրաժարվել ոսկե գեղմից և վերջապես ասաց.

-Անշուշտ, դուք համաձայն եք, որ պետք է վաստակեք նման արժեքավոր նվերը: Յասոնը գլխով արեց:

-Շատ լավ,- ասաց թագավորը, -սա է խնդիրը՝ դու պետք է միայնակ, զենք ու զրահով կռվես կրակ շնչող իմ երկու ցուլերի հետ: Ապա նրանց օգնությամբ վիշապի ատամներ ցանես դաշտում:

-Երբ դու ցանես դաշտը, - շարունակեց թագավորը, - ատամները կաճեն և կդառնան զինված ռազմիկներ: Դու պետք է սպանես յուրաքանչյուրին, ով կհարձակվի քեզ վրա: Ապա կստանաս ոսկե գեղմը, - թագավորը կրկին ժպտաց, բայց Յասոնի սիրտը ծանրացավ: Նա գիտեր, որ ոչ ոք, նույնիսկ իր նման քաջ ռազմիկը, չի կարող իրականացնել այսպիսի անհնար առաջադրանքը:Բայց հաջողությունը Յասոնի կողմն էր: Երբեմն աստվածներն ու աստվածուհիները, ովքեր ապրում են բարձր Օլիմպոսում, գալիս էին մահկանացուներին օգնելու, և Հերան՝ բոլոր աստվածների թագուհին, որոշեց օգնել Յասոնին, որովհետև նա հիացած էր նրա խիզախությամբ: Նա կանչեց Աֆրոդիտեին՝ սիրո աստվածուհուն: Նրանք միասին Աֆրոդիտեի որդուն՝ երիտասարդ Էրոսին, ասացին, որպեսզի նա իր կախարդական նետով նետահարի Մեդեայի՝ Կոլխես թագավորի դստեր սիրտը:

Էրոսը կրակեց իր նետով, և Մեդեան սիրահարվեց Յասոնին: Քանի որ նա սիրահարված էր, որոշեց օգնել նրան: Մեդեան գեղեցիկ էր և տիրապետում էր կախարդության: Նա Յասոնին զորեղ յուղ տվեց, որը նրան կպաշտպաներ կռվի ժամանակ: Ապա Մեդեան լաց եղավ, որովհետև նա գիտեր, որ դավաճանում էր իր հորը: Բայց նա չէր կարող չօգնել Յասոնին:

-Ես չեմ մոռանա քեզ,- խոստացավ Յասոնը:



Հաջորդ առավոտ Յասոնը կախարդական յուղը քսեց իր մարմնին : Մեդեայի, թագավորի և արգոնավորդների աչքի առաջ նա հնազանդեցրեց կրակ շնչող ցուլերին և սկսեց ցանել դաշտը: Ամեն հարձակվող զինվորի Յասոնը տապալում էր իր սրի մեկ հարվածով: Նա սպանեց բոլորին : Բացի Մեդեայից՝ բոլորն ապշած էին: Թագավորը չէր կարողանում հավատալ: Յասոնը վաստակեց ոսկե գեղմը:

Բայց Կոլխես թագավորը պատրաստ չէր զիջելու : Երբ արգոնավորդներն հեռացան Մեդեայի և ոսկե գեղմի հետ միասին, թագավորն իր նավերն ուղարկեց նրանց ետևից:

-Սպանեք Յասոնին,- հրամայեց նա:

Մեդեան նորից փրկեց նրանց : Իր կախարդական ուժով նա սպանեց թագավորի ռազմիկներին: Այդպես վարվելով՝ նա ստիպված սպանեց նաև իր սեփական եղբորը: Նրա ցավը շատ մեծ էր:



Արգոն հպարտ վերադարձավ Հունաստան: Ոսկե գեղմը ձեռքին՝ Յասոնը Պելիասից պահանջում էր գահը: Բայց Պելիասը չէր զիջում: Նա հրամայեց իր բոլոր զինվորներին պաշտպանել իրեն Յասոնից, բայց Մեդեան միտք ուներ: Այս անգամ նա խորամանկ հնարք արեց:

Առաջին հերթին,Մեդեան գնաց տեսնելու Պելիասի դստրերին: -Ես կախարդական ուժեր ունեմ,-ասաց նա նրանց,- ես կարող եմ կրկին վերադարձնել ձեր ծեր հոր երիտասարդությունն ու ուժը: Մեդեան կտրեց խոյի գլուխը և եփեց այն ջրում: Հետո կախարդական խոսքեր ասաց: Խոյը թպրտաց, կրկին երիտասարդ և առողջ էր: Պելիասի դստրերը զարմացած էին: Ինչ հիասքանչ նվեր. նրանք կարող էին իրենց հորը երիտասարդություն տալ:



Հավատալով Մեդեայի կախարդանքին՝ Պելիասի աղջիկները սպանեցին նրան, եփեցին ջրում և սպասեցին Մեդեայի կախարդական խոսքերին, որոնք պետք է Պելիասին կրկին երիտասարդ և առողջ դարձնեին: Բայց Մեդեան, իհարկե, չասաց կախարդական խոսքերը: Պելիասը մահացավ: Այժմ Յասոնը թագավոր էր:Մեդեան շատ անգամներ էր փրկել Յասոնին: Բայց նրանց միջև ամեն ինչ չէր, որ հարթ էր: Որոշ ժամանակ անց Յասոնը որոշեց ամուսնանալ Քորինթի արքայադստեր հետ: Մեդեան ընկճված էր այդ դավաճանությունից և մեկ այլ կախարդություն արեց: Սրա պատճառով արքայադուստրը մահացավ: Ոմանք ասում են, որ այդ սարսափելի մահից հետո Մեդեան հեռացավ Աթենք: Յասոնը թագավոր էր, բայց նա մենակ էր կառավարում: Որքան նա մեծանում էր, այնքան ավելի շատ էր խոսում ոսկե գեղմի,

իր քաջ և հրաշալի որոնումների մասին: Նա որոշեց նվիրաբերել Արգո նավի տախտակամածը մեծ աստված Պոսեյդոնին՝ ծովի աստծուն: Հաճախ Յասոնը նստում էր այդտեղ՝ վերհիշելով իր հրաշալի արկածները: Գուցե աստվածները տխուր էին Յասոնի՝ Մեդեայի հետ նման վարմունքի պատճառով: Մի երեկո Յասոնը նստած էր Արգո նավի քթին և մտածում էր, այն ընկավ և սպանեց նրան: Այնուհետև Զևսը տարավ նավի քիթը վեր՝ երկինք: Նա աստղերի համաստեղությունը դրեց նավի տեսքով, որը հայտնի է որպես Արգո: Այն միշտ կհիշեցնի ոսկե գեղմի փառահեղ որոնման մասին: